

ՍԱՍԱՆՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԻՐԱՆՈՒՄ ԸՍՏ ԱԳԱՔԱՆԳՆՂՈՍԻ

Ն. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Հնագույն ժամանակներից հայ պատմագրությունն ու բանասիրությունը բացառիկ հետաքրքրություն են հանդես բերել Իրանի պատմության և մշակութային կյանքի նկատմամբ: Գա բրնական է ու հասկանալի: Հայաստանն ու Իրանը, լինելով դրացի երկրներ, իրենց ջաղաքական հարաբերությունները շատ են խաչաձևել ինչպես մարական, աքեմենյան ու պարթևական, այնպես էլ սասանյան ժամանակաշրջաններում: Հարուստ բովանդակություն ունեցող այդ հարաբերություններն իրենց արտացոլումն են գտել և՛ հունա-հռոմեական, և՛ արարական, և՛ հայկական պատմական գրականության մեջ:

Իրանի պատմության կարևորագույն դրվագներից է Սասանյան տիրապետության 416-ամյա ժամանակահատվածը:

Արտաշիր Պապականի նախաձեռնությամբ կենսագրոված Պարթև Արշակունիների տապալման և Սասանյան հեղաշրջման պատմությունը խիստ արոտ ուսումնասիրված ժամանակաշրջան է, որի հիմնական պատճառը ժամանակակից գրավոր աղբյուրների բացակայությունն է: Հայտնի է, որ Սասանյան Իրանի պատմության ուսումնասիրողները (Ա. Կրիմսկի, Մ. Մ. Գյակոնով, Ն. Վ. Պրգուլևսկայա, Վ. Գ. Լուկոնին, Ռ. Ն. Ֆրայ և ուրիշներ) որպես սկզբնաղբյուրներ օգտագործել են X դարի արաբ պատմաբաններ Տարբուհի (839—923), Քալամիի և ուրիշների հաղորդումները, ինչպես նաև V—VI դարերում կազմված «Կարնամակ» ժողովածուի նյութերը: Վերոհիշյալ աղբյուրները Սասանյանների ժամանակաշրջանի պատմության համար ընդհանրապես շատ կարևոր են, սակայն միայն նրանց օգնությամբ Սասանյան հեղաշրջման հանգամանքներն ու ընթացքը հանգամանորեն շարադրելը հնարավոր չէ: Եվ պատահական չէ, որ իրանագետները խիստ դժգոհում են դեպքերին ժամանակակից աղբյուրների աղբյուրությունից, նրանց հակառակահոսությունից: Ահա այդ հանգամանքներն էլ դժվարություններ են ստեղծում հին Պարսկաստանի պատմության մանրամասն ուսումնասիրության գործում¹: Որքան էլ տարօրինակ է, բայց փաստ է, ինչպես ընդգծում է Ռ. Ֆրայը, որ իրանցիները մինչև իսլամի հաղթանակը ժամանակագրական (թվագրված) պատմություն չեն ունեցել, այնպիսի պատմություն ինչպիսինն ունեին հույն և մուսուլման հեղինակները²:

Սասանյան հեղաշրջման պատմության համար անզուգական սկզբնաղբյուր է IV դարի հայ մատենագիր Ազաթանգեղոսի «Պատմություն հայոց» աշխատությունը, որն առ այսօր ստվերի տակ է մնացել և չի արժանացել իրանագետների ուշադրությանը: Պրոֆեսոր Շտակլերերը իր «Մի քանի խոսք Սասանյան Պարսկաստանն ուսումնասիրելու համար հայկական պատմագիրների նշանակության մասին» ուշագրավ հոդվածում գրում է. «...Սասանյան ժամանակաշրջանի պատմական հուշարձանների նշանակալի մասը անհետացել է խառնակությունների ժամանակ, որոնք վրա հասան արաբների կողմից Պարսկաստանի նվաճումից և Իրանում իսլամի տարածումից հետո և մեզ են հասել սոսկ այն փոքրաթիվ հատվածները, որոնք կամ պահպանվել են բնագրերում, կամ թարգմանվել են արաբական ժամանակաշրջանի հեղինակների կողմից... բայց, ի բարեբախտություն գիտության, պարսկական գրականության մեջ եղած այդ բացը լրացնում են մյուս, պարսկական պետությունը հարևան ժողովուրդների՝ այն է հույն, ասորի, չին գրողները և,

¹ В. Г. Луконин, Иран в эпоху первых Сасанидов. Л., 1961, с. 6, Р. Н. Фрай. Наследие Ирана. М., 1972, с. 19.

² Р. Н. Фрай, նշվ. աշխ., էջ 22: Իսլամն Իրանում հաղթանակեց և պաշտոնական կրոն ճանաչվեց X դարում:

last not least Հայաստանի պատմիչները, որը դեռևս մարական թագավորության ժամանակներից սերտ կապերի մեջ էր Պարսկաստանի հետ: Վերջիններս ոչնչով չեն զիջում վերը հիշատակված ժողովուրդների պատմագիրներին: Ընդհակառակը, հայերը, որոնք ամենամերձավոր հարաբերությունների մեջ էին Պարսկաստանի հետ, շատ առումներով անգամ ավելի էին իրազեկ, քան մյուս ժողովուրդների գրողները»³:

Ինչպես Սասանյան ժամանակաշրջանի, այնպես էլ Հին աշխարհի պատմության հույժ կարեւոր դեպքերի վերաբերյալ վկայություններ, որոնց մասին նույնիսկ տեղեկություն չունեն հունահռոմեական և արաբական հեղինակները, պահպանվել են հայ մատենագիրների երկերում: Այդ տեղեկությունները նրանք քաղել են դեպքերին ժամանակակից արևելյան ազգային սկզբնաղբյուրներից, որոնք մեզ չեն հասել զանազան օրյեկտիվ և սուրյեկտիվ հանգամանքների բերումով:

Ազաթանգեղոսի «Պատմություն հայոց» աշխատությունը ժամանակին թարգմանվել է մի շարք լեզուներով՝ հունարեն⁴, լատիներեն, արաբերեն, հարեշերեն, վրացերեն և այլն: Մեր հեղինակի վերահիշյալ այդ բազմալեզու օրինակները, որոնք անշուշտ թարգմանված են հայերեն սկզբնօրինակից, չնայած հիմնականում ունեն միևնույն բովանդակությունը, այնուամենայնիվ դրսևորում են որոշ տարբերություններ: Հայալեզու Ազաթանգեղոսի սկզբից բացակայում է մի ընդարձակ հատված, որտեղ շարադրված է պարթևական Արշակունի վերջին թագավոր Արտավանի դեմ Արտաշիր Սասանյանի զխալոթած պարսիկների ապստամբության և պարթևական 483-ամյա (262 մ. թ. ա.—266 մ. թ.) պետության կործանման պատմությունը: Այդ հատվածը «...ոչ միայն բանասիրական մեծ արժեք ունի, այլև տալիս է պատմական նոր տվյալներ, որոնք պակասում են մեզ համար հայկական բնագրի մեջ...»⁵: Ահա այս հատվածի շուրջն էլ բանասերներն ու պատմաբանները բաժանվեցին տարակարծիք երկու խմբի: Հետազոտողների մի խումբը գտնում է, որ այդ հատվածը չպետք է համարել Ազաթանգեղոսին անհարազատ, որ այդ թյուրիմացությունը պարզապես կատարվել է ուշ շրջանի արտագրողների և «խմբագրողների» անփութության հետեւանքով, իսկ մյուս խումբը գտնում է, որ այդ հատվածի հեղինակը Ազաթանգեղոսը չէ, այլ այն ներմուծվել է նրա պատմության մեջ ուշ շրջանում: Մեր խորին համոզմամբ ճիշտ են այն հետազոտողները, որոնք գտնում են, որ այդ հատվածի հեղինակը Ազաթանգեղոսն է: Եվ ահա թե ինչու:

Առաջարանի այդ հատվածի գոյության մասին վկայություններ ունեն Մ. Խորենացին, Ղ. Փարպեցին, Մ. Կաղանկատվացին և ուրիշներ:

Մ. Խորենացին գրում է, որ «Յաղագս սորա և համատահիցն կարճ ի կարճոյ իմն անցանելով աշող քարտուղարն Տրդատայ Ազաթանգեղոս, փոքր ի շատէ պատմէ զմահն Արտանայ Պարսից թագաւորին, և զբաննալ տէրութեանն Պարթևաց յԱրտաշրէ որդոյ Սասանայ, և զնուսնն Պարսից ընդ ձեռամբ նորա, և զքինխնդիր լինել Խոսրովոյ հօր Տրդատայ, և ասպատակաւ հինից աներել զաշխարհն Պարսից և Ասորեստանեայց»⁶: Իսկ Ղ. Փարպեցին գրում է. «Սկիզբն առաջին գրոց պատմութեանն Հայոց, որում սկիզբն արարեալ պատմեաց ստուգիւ այրն երանելի Ազաթանգեղոս, սկսեալ ի մահու Արտանայ յԱրտաշրէ յորդոյ Սասանայ բռնաւոր Ստահրացւոյն...»⁷:

Որ Ազաթանգեղոսի սկզբնական հայերեն բնագրում դեռևս VII դարում եղել է այդ հատվածը, երևում է VII դարի մատենագիր Մ. Կաղանկատվացու վկայությունից: Նա պատմում է, որ երբ Որմիզդյան Շապուհը, որպեսզի իմանա, թե որ ազն ու լեզուն ունեն բարձ ու պատիվ, կազմակերպեց ճոխ ճաշկերույթ պարսից զանվատոհմ իշխանական տոհմերի ներկայացուցիչների համար, ասաց. «զՊարսից և զՊարթևաց զբնական պահլաւիկս և զազատ սրանց զնախադրութիւնս քաջ գիտեմ. իսկ զԱրմենու զազատատոհմն և զնոցին նախապատուութիւնսն ոչ հարցաք գիտել՝ ոչ ի հարցն մերոց թագաւորաց և ոչ ի մատենագրաց: Եւ արդ մի յերկուց առաջի կայ ձեզ նախարարացդ Հայոց՝ ցուցանել զնախնական գիր իւրաքանչիւր տանց զաստիճան և զպատիվ, ...»

³ P. Штакельберг, Несколько слов о значении армянских историков для изучения Сасанидской Персии. (См. Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1898, с. 192—196).

⁴ Այսօրվա գրությունը հրատարակի վրա կան Ազաթանգեղոսի հունալեզու պատմության երկու խմբագրություններ, մեկը 1762 թ. հրատարակել է Լագարդը, իսկ մյուսը՝ 1946 թ. Իսպանիայում հայտնաբերվել և հրատարակվել է Ժ. Գարթի կողմից: Հունալեզու Ազաթանգեղոսի այդ հատվածը բանասեր Գ. Զարրհանայանը թարգմանել և 1897 թ. զետեղել է իր «Հայկական հին դպրության պատմություն» աշխատության մեջ:

⁵ Ա. Տեր-Ղեռնդյան, Ազաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը, Եր., 1963, էջ 14:

⁶ Մ. Խորենացի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1913, 2, 67:

⁷ Ղ. Փարպեցի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1907, էջ 5:

զուն, զհող և զշուր և զամենայն ստացուածս Արեւաց լազատ արանց շնորհսնցուր...»։ Պարսից թագավորի պահանջը բավարարելու համար հայ իշխանները Շապուհ արքային «...մատուցին առաջի թագաւորին զԱզաթանգեղոյ Պատմութիւն ցանկալի. և հրամայեաց ընթեռնուլ և թարգմանել ի Պարսից գիր և ի լեզու: Եւ իմացեալ եթէ զսկիզբն յԱրտաշէրէ տոնէ ի նախնոյն իւրմէ, առաւել զուրանացեալ և ներրողումն գրոցն առնելով՝ դնէր ի վերայ շաքց իւրոց խանդաղատելով...»⁸:

Նշանակում է և՛ Մ. Խորենացու, և՛ Ղ. Փարպեցու, և՛ VII դարի մատենագիր Մ. Կաղանկատվացու վացու օրօք հրապարակի վրա եղել է Ազաթանգեղոսի առաջաբանի լրիվ տեքստը՝ և ուշ շրջանի «խմբագրողներն» իրենց հայեցողությամբ վերամշակել են, ընագրից դուրս են թողել պատմության համար այդ հույժ կարևոր հատվածը, որը չի առնչվում Գրիգոր Լուսավորչի և ընդհանրապես Հայաստանում քրիստոնեության տարածման պատմության հետ: Եվ վերջապես, այն, որ հայ մատենագրության մեջ վերջին վկայությունը VII դարի մատենագիր Մ. Կաղանկատվացուն է, ավելի է հաստատում մեր ենթադրությունը, որովհետև VII դարում, երբ քրիստոնեությունը Հայաստանում վերջնականապես ընդունեց ազգային կերպարանը, համարյա բոլոր հայ մատենագիրներին, մասնավորապես Ազաթանգեղոսի աշխատությունը եկեղեցական պաշտոնական պատմագրության կողմից ենթարկվեց «հիմնական խմբագրման»: Եկեղեցականներն էլ ձգտել են այդ աշխատությունը խմբագրել այնպես, որ նա ծառայի քրիստոնեական եկեղեցու կրոնա-բարոյական պահանջներին և ամրապնդի նրա գաղափարական հիմքերը: Հետևապես, մեր համոզմամբ, ընդունելի պետք է համարել այն բանասերների և պատմաբանների եզրակացությունները, որոնք օտարամուտ չեն համարում հունալեզու Ազաթանգեղոսի առաջաբանի այն հատվածը, որը բացակայում է հայկական օրինակի մեջ: Եթե իրոք այն թարգմանվել է հայերենից, ապա օրինական հարց է ծագում, թե թարգմանիչ հույնը ի՞նչ շահագրգռվածություն ուներ լրացումներ կատարելու Ազաթանգեղոսի բնագրում: Ազաթանգեղոսի պատմության աշխարհաբար թարգմանիչ Ա. Տեր-Ղևոնդյանը, հիմնավոր կերպով մերժելով Ա. Տ. Գուտշիդի այն ենթադրությունը, թե առաջաբանի այս հատվածը հունարեն թարգմանչի կողմից է ավելացվել, գրում է. «Այժմ պարզ է, որ այս հատվածը ավելացված է հունարենի թարգմանվելուց հետո Սիմոն Մետափաստեսի ամփոփումից առաջ: Իր այս եզրակացությունը հեղինակը հիմնավորում է նրանով, որ առաջաբանի հեղինակի համակրանքը Արտաշիր Սասանյանի կողմն է՝ ընդդեմ Արշակունյաց, իսկ Ազաթանգեղոսի պատմության մեջ՝ ընդհակառակը»⁹: Մեր կարծիքով այս եզրակացությունը ևս հիմնավոր չէ, և՛նա թե ինչու:

Ազաթանգեղոսը, հարազատ մնալով մեզ անհայտ իր սկզբնաղբյուրների տվյալներին, շարագրել է Իրանում սասանյան հեղաշրջման օրյեկտիվ պատմությունը: Եթե ընդունենք այդ կարծիքը, ապա ինչպե՞ս հասկանալ, երբ ծանոթագրությունների հեղինակը գրում է. «Զի ժխտվում, որ առաջաբանը V դարում Ազաթանգեղոսի գրքին կից է եղել, մանավանդ, որ իր լեզվական հատկանիշներով բնագրից չի հեռանում»¹⁰: Վերջապես, նա ճիշտ է նկատել, որ «հունական այս առաջաբանի սկզբնական փոքր հատվածը, ուր խոսում է նավարկության մասին, հայկական առաջաբանի առաջին մասի ամփոփումն է»¹¹: Հետևապես մենք համամիտ ենք այն հետազոտողների կարծիքին, ովքեր գտնում են, որ հունարեն օրինակում պահպանված հատվածը պատկանում է Ազաթանգեղոսի գրչին: Մենք կարծում ենք, որ Ազաթանգեղոսն իր «Պատմություն հայոցը» պետք է սկսեր Իրանում Արշակունյաց հարստության հենց կործանման և Սասանյան հեղաշրջման հետ կապված իրադարձությունների նկարագրմամբ, որովհետև միայն այդպես հասկանալի կլիներ հայոց դարձի պատմությունը, այն է՝ քրիստոնեության հռչակումը պետական կրոն: Սասանյանները ոչնչացրին Արշակունիների ոչ միայն պետական կարգն ու տնտեսական ապարատը, այլև նրանց կրոնը, վերականգնելով զրադաշտականությունը և պարսկական հնագույն սովորություններն ու ծեսերը: Ավելին, նրանք ձեռնամուխ եղան զենքի ուժով զավթելու հայ և բուշանական Արշակունիների տիրույթները, այնտեղ բռնի միջոցներով տարածելու իրենց կրոնն ու բարբերը: Սրանք փաստեր են, որոնք կազմում են Ազաթանգեղոսի պատմության առանցքը: Հետևաբար, հունարեն տեքստում պահպանված հատվածը Ազաթանգեղոսի պատմության անբաժան և անհրաժեշտ մաս պետք է համարել:

Ինչպես տեսնում ենք, Ազաթանգեղոսն իր պատմությունն սկսել է Իրանում Պարթև Արշակունիների նկատմամբ Սասանյան հարստության տարած հաղթանակի պատմությունից:

⁸ Մ. Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մոսկվա, 1869, 2, 1:

⁹ Տե՛ս Ազաթանգեղոս, Պատմութիւն հայոց, աշխարհաբար թարգմանութիւն, ներածականով և ծանոթագրություններով Ա. Տեր-Ղևոնդյանի, Եր., 1977, էջ 160:

¹⁰ Նույն տեղում, էջ 157:

¹¹ Նույն տեղում, էջ 167:

Պարթև Արշակունիների համար նորոթյուն չէին ինչպես պարսիկների, այնպես էլ իրենց-իսկ կողմից զենքի ուժով նվաճված ժողովուրդների ապստամբությունները: Ամբրիկյան արևադարձն Ռիշարդը նեյտոն Ֆրայը, հիմք ընդունելով Արքեիայի սիրիական ժամանակագրության այն վկայությունը, ըստ որի պարսիկները նախկին ժամանակներում ևս փորձեր էին կատարել տապալելու պարթևներին, եզրակացնում է, որ պարսիկների պայքարը պարթևների դեմ սկսվել է դեռևս Վաղարշ 4-րդի (191—208 թթ.) օրոք, երբ պարթևները կոչում էին պարսիկների դեմ¹²: Պետք է նշել, որ Պարթևական Արշակունիների պետությունն սկսած 3-րդ դարի վերջերից ձևականորեն էր համարվում մի միասնական միավոր, որովհետև փաստորեն այն բաժանված էր մի շարք կիսանկախ փոքրիկ թագավորությունների՝ իրենց թագավորների գլխավորությամբ: Դրանց միջև հաճախակի տեղի էին ունենում զինված ընդհարումներ, որոնք խարխլում էին Արշակունիների քաղաքական, ռազմական և տնտեսական գերիշխանությունն ամբողջ Իրանի վրա: Եթե ի նկատի ունենանք, որ Արևմուտքից էլ Հռոմեական կայսրությունն էր անընդհատ ընդարձակում իր ազդեցությունը շրջանակները դեպի Արևելք, ապա ավելի պարզ կդառնա պարթևների ծանր վիճակը:

Պարթևաստանի վերոհիշյալ կիսանկախ թագավորություններից էր Ֆարսի նահանգը, որի կենտրոնն էր Աքեմենյանների հայրենիքը՝ Պասարպղը, որի կառավարիչն էր Անահիտի տաճարի բլուրմ Սասանի որդի Պապակը: Վերջինս ի հաշիվ հարևան մարզերի օրոտոր ընդարձակում էր իր տիրույթները: Այս ճանապարհով Ֆարսի նահանգին միացան Բապահանի, Խուրխուտանի և Քերմանի մարզերը: Ֆարսի կառավարիչների քաղաքական և տնտեսական հզորությունը զբնակվում ուժեղանում էր Պարսկաստանում: Պապակը, հաղորդում է Տարսին, գրավել էր Ֆարսի կառավարիչի թագը և դրանով թագադրել իր ավագ որդի Շապուհին: Դրանից հետո իշխանության համար պայքար է սկսվում Արտաշիրի և Շապուհի միջև: Արտաշիրն սպանում է իր եղբայր Շապուհին և ինքը դառնում թագակիր¹³:

Այժմ տեսնենք, թե այդ իրադարձությունները, որոնք, ինչպես Ագաթանգեղոսն է վկայում, տևեցին 12 ամիս, պատմական ինչպիսի պայմաններում տեղի ունեցան և կատարված դեպքերն ինչպես են իրենց արտացոլումը գտել Ագաթանգեղոսի «Պատմություն հայոց»-ի էջերում:

Մ. թ. II դարի վերջերից սկսած ավելի ծանրացավ Պարթևական Արշակունյաց թագավորության ներքին քաղաքական և միջազգային իրավիճակը: Հռոմն անարգել կերպով շարժվում էր դեպի Արևելք: Եփրատն արդեն դադարել էր երբեմնի հզոր Պարթևաստանի և Աշխարհակալ Հռոմի միջև սահմանագիծ լինելուց: Պարթևական պետությունն ապրում էր իր մայրամուտք, և ժամանակը գործում էր ի վնաս Արշակունիներին: Երկրի այդ քաղաքական ճգնաժամն ավելի խորացավ Վաղարշ 4-րդի մահից հետո: Երկարատև գահակալական կոիվներից ու արտաքին պատերազմներից պետությունը հյուժվել էր տնտեսապես և թուլացել քաղաքականապես ու ռազմականապես: Ամենուրեք սկսվել էին ապստամբություններ և նվաճված ժողովուրդների ազատագրական շարժումներ: Անկախության գրոշ էին բարձրացրել բակտրիացիները, քուշանները, պարսիկները և նրանց գերիշխանության տակ գտնվող այլ մեծ ու փոքր ժողովուրդներ: 208 թ. Վաղարշ 4-րդի մահից հետո բռնկված կատաղի գահակալական պայքարում հաղթանակ տարավ նրա որդի Վաղարշ 5-րդը (208—216 թթ.): Սա ևս շկարդացավ կայունացնել պետության խախտված հիմքերը: Նոր թագավորի դեմ դուրս եկավ իր հարազատ եղբայր Արտավանը: Պարթևական տերությունը, որի սահմաններն արևմուտքում տարածվում էին մինչև Եփրատ, բաժանվեց փաստորեն այդ երկու եղբայրների միջև: Նրանցից յուրաքանչյուրի թիկունքում կանգնած էին Արշակունյաց թագավորության կառավարող վերնախավի որոշակի շրջանները: Երկրի ներսում ուժեղացել էին կենտրոնախույս ուժերը: Անկախության գրոշ էին բարձրացրել պետության կազմի մեջ մըտնող առանձին ցեղային շրջաններ: 216 թ. մահացավ Վաղարշ 5-րդը. գահն անցավ Արտավան 5-րդին, որն իշխեց 216-ից մինչև 226 թիվը:

Արշակունյաց պետության մեջ ծավալված վերնախավի շարժումներից ամենածավալունը Ֆարսի նահանգի պարսիկների ապստամբությունն էր՝ Սասանի թոռ, Պապակի որդի Արտաշիրի գլխավորությամբ: Նա պետական հեղաշրջմանը նախապատրաստվում էր մեծ խնամքով, հենվելով պարսից հասարակության բոլոր դասերի վրա: Արտաշիրի նախապատրաստությունների և նատալների մասին Ագաթանգեղոսը գրում է. «Իսկ Արտաշիր յարուցեալ ժողովիաց զմեծամեծքս ի Պարսից և յԱսորեստանեայց, ընդ որս և զառաջինն ի խորհուրդ մտեալ էր. եկաց ի մէջ նոցա և ասէ. Ո՛ր, քաջքդ Պարսիկք Ասորեստանեայք, ղգոռոգութիւն Պարթևաց ի վաղ ժամանակից զիտեմք, և թէ զիարդ զայլոցն վաստակս յափշտակեն՝ ճանաչեմք, պարծին յանիրաւեալ իրեանց, ոչ դադարեն տարապարտ սպանանել. գարշին ի Պարսից և յԱսորեստանեայց՝ Պարթևքը եկա-

¹² P. H. Фрай, նշվ. աշխ., էջ 285:

¹³ В. Г. Луконин, նշվ. աշխ., էջ 13:

մուտք է մեր աշխարհ չերկրէ բարբարոսաց: Ըստ արդ զի՛նչ ունիք սասել. եթե արդարեւ սուտ իցեն բանք իմ. կտցցէ մնասցէ նա որ թագաւորէն անիրուութեամբ. ապա եթէ խօսեցայ ճշմարտութեամբ. զինու զարդու վառեցուր, լաւ ի մեզ մեռանել. քան եթէ ծառայել թագաւորի անիրուի: Զայսոսիկ Արտաշիր»¹⁴: Եվ պատահական չէ, որ ժողովի հրավիրված պարսից իշխանները մեծ խանդավառությամբ դիմավորեցին Արտաշիրի կողմ «քանզի ցանկանային թոթափել զլուծ տէրութեանն Պարթևաց, և իւրեանց ի բնիկ ազգատոհմէն Պարսից ունել զոք թագաւոր. որոյ վասն սասն առ Արտաշիր. Դու լիջիր առաջնորդ աստուածոց և արդեանց գործոց ընտրեալ առ ի մէնչ, որոնց զիմաստուն խորհրդոց քոց առեալ ի զիտրծ, և զիտեմք զհրամանատարութիւն քոյ առաքինի ուղղութեամբ ի վեր երևել. և արդ զոր կամիադ արա, և առաջնորդ զքեզ ընծայեցո. աւաղիկ մեք պատրաստ եմք հետեւ զվեր բանից քոց, առնել ոչ ինչ միանգամ յօգուտ երկաթանշիր կողմանց իցէ...»¹⁵: Այս հատվածում, ինչպես տեսնում ենք, Ազաթանգեղոսը նկարագրում է Պարթևական Արշակունյաց պետության ներքին անկայունությունը, պարթևների կողմից նվաճված ժողովուրդների դժգոհություններն ու սկսված ազատագրական պայքարը: Այս մասին X դարի արաբ պատմիչ Տարարին գրում է. «Արտաշիրն ասում էր, թե ցանկանում է իր իշխանությունը վերադարձնել օրինական ժառանգորդներին և նրանց տիրապետությունը դարձնել այնպիսին, ինչպիսին եղել էր նրանց նախորդների ժամանակ, երբ նրանք ապրում էին մինչև ցեղային թագավորները և նորից միավորել իշխանությունը մեկ թագավորի տիրապետության ներքո»¹⁶:

Անշուշտ Ազաթանգեղոսի և Տարարիի սկզբնաղբյուրը եղել է նույնը, մի անհայտ հեղինակ, որի գործերը մեզ չեն հասել, որից Ազաթանգեղոսն օգտվել է IV դարում, իսկ Տարարին X դարում: Այս վկայություններից դժվար չէ նկատել նաև, որ Աբմենյանների ժամանակաշրջանի Իրանի փառքին վերադառնալու Արտաշիրի լուզունգը բացարձակապես քաղաքական նպատակներ էր հետապնդում: Մի՞թե Արտաշիրի համար պարզ չէր, որ երբեք հնարավոր չէ վերադառնալ արեմենյանների անցած գնացած ժամանակներին: Հետևապես, դա բացարձակ պրոպագանդա էր, իր համախոհների շարքերը խտացնելու մի միջոց: Սկսվեց ապստամբությունը, սակայն Ազաթանգեղոսի վկայությամբ, նախքան վճռական գործողությունների անցնելը, պարսից մեծամեծները Զիկ և Կարեն զորավարներին ուղարկեցին Արտավանի մոտ և հայտնեցին. «Փոյթ պետութեան է արքայ առ մեզ Պարսիկ»՝ ծառայիդ հպատակ կալ արքայի. իբրու գողով նորուն ամենայնի տէր, և թագաւորին՝ հաւասարութեամբ և արդարութեամբ լինել իրացն խնամատար, և հեռի ի խժժօագոյն բարոց կառաւարկ. ահարկու առ թշնամիսն երևել և մարդասէր առ հպատակ: Փանզի զիարդ իցէ նմա զանիրաւ պատուհասել. եթէ ինքն ինքեամբ յանիրաւութիւնս հասեալ իցէ. որպէս զեղեռնագործս ընդ տանջանօք արկանել. եթէ ինքն ի շարիս վնասակարա իցէ յօժարեալ: Արդ մեր ի վերայ հասեալ ծանր-ծանր վնասուց քոյոցդ յանցանաց. ի բաց որոշեցաք զմեզ ի քումմէ իշխանութենէդ. ոչ ի հպատակութենէն տաղակացեալք, այլ յապիրատ թագաւորէն խուսափեալք. ոչ զրոնաւորութենէ բուռն հարեալք, այլ անագորոյն մտաց բոնաւորի տանել շկարացեալք... Իսկ թագաւորն Արտաւան զաշս ի խոնարհ ունելով՝ զմեծ ժամա զյատակս տանն նշմարէր, իրագնա, կանխազէտ կործանման թագաւորութեան իւրոյ»¹⁷:

Զիկն ու Կարենը, վերադառնալով Արտաշիրի մոտ, նրան հաղորդեցին, գրում է Ազաթանգեղոսը, որ Արտավանը որոշել է դիմադրել: Սկսվեց ապստամբությունը, որն, ինչպես Ազաթանգեղոսն է վկայում, շարունակվեց, «զամիսս երկոտասուն ճակատեալ կացին ընդդմ միմեանց, երբեմն ի մարտ մատուցեալք և երբեմն դադարեալք»¹⁸:

Արշակունյաց կառավարող վերնախավից դժգոհ էին նույնիսկ պարթևները, այդ երևում է նրանից, ինչպես Ազաթանգեղոսն է վկայում, որ Արտավանի և Արտաշիրի միջև ծավալված մարտական գործողությունների թե՛ծ պահին «զօրանայր կողմն Արտաշիրի՝ ի լքանել թողուլ և այլոց ևս բազմաց զԱրտաւան և զալ յննուլ յինքն Արտաշիր...»¹⁹, Անկասկած, Արտավանին լրողներից շատերը նրա բանակում գտնվող պարթևներն էին, որոնք շատ ոռնալ էին տեսնում պարթևական պետության վերահաս կործանումը: Նշենք, ինչպես Ազաթանգեղոսն է ասում, ինքը՝ Արտավանն էլ էր զգում իր անկումը. «Իսկ թագաւորն Արտաւան զաշս ի խոնարհ ունելով զմեծ ժամա զյատակս տանն նշմարէր, կանխազէտ կործանման թագաւորութեան իւրոյ»²⁰:

¹⁴ Տե՛ս Ազաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, էջ 4Ա-4Բ:

¹⁵ Նույն տեղում, էջ 4Բ:

¹⁶ Տե՛ս В. Г. ЛУКОНИН, նշվ. աշխ., էջ 12:

¹⁷ Ազաթանգեղոս, նույն տեղում:

¹⁸ Ազաթանգեղոս, էջ 4Գ:

¹⁹ Ազաթանգեղոս, էջ 4Բ:

²⁰ Նույն տեղում:

226 Թ. Հորմեզդյան դաշտում տեղի ունեցավ վճռական ճակատամարտ՝ Արտավանի կանոնավոր զորքերի և Արտաշիրի ղեկավարած պարսից ապստամբների միջև: Ազաթանգեղոսը հիշատակում է, որ դա պարթևների և պարսիկների երկրորդ ճակատամարտն էր. նա գրում է. «Ապա իբրև յերկրորդում նաւագի անդ հարան ընդ միմեանս, բազումք անկանէին ի Պարթևաց, և ինքն Արտաւան անապարէր ի փախուստս»²¹: Ճակատամարտն ավարտվեց Արտավանի լիակատար պարտութիամբ, մարտի դաշտում էլ նա գտավ իր մահը: Այս ճակատամարտը լուծեց պարթևական Արշակունյաց դինաստիայի ճակատագիրը: 227 Թ. ապրիլի 28-ին Արտաշիրը հայտարարվեց արքայից արքա և հիմնադրեց Սասանյան դինաստիան, որը որոշակի դեր խաղաց ժամանակի միջազգային հարաբերություններում շուրջ 416 տարի, այսինքն՝ մինչև 642 Թ., երբ Պարսկաստանը նվաճվեց արաբների կողմից: Այսպիսով, ինչպես Ք. Մոմզենն է գրում, «Սասանյան դինաստիայի բնմ բարձրանալու շնորհիվ վերականգնվեց Ալեքսանդրի կողմից կործանված պարսկական Թագավորությունը»²²:

Ամփոփելով Իրանում տեղի ունեցած դինաստիական փոփոխությունը, հայ մատենագրության նահապետը գրում է. «Ընդ նուագն ժամանակաց Թագաւորութեանն Պարթևաց ի բառնայ տէրութեանն Ալրտաւանայ որդույ Վաղարշու, ի սպանանել զնա Արտաշիր որդույ Սասանայ,— որ էր նախարար ոմն ի Ստահր գաւառէ, որ եկեալ միաբանեաց զգօրս Պարսից, որք լրին խոտեցին մերծեցին անարգեցին զտէրութիւնն Պարթևաց, և հանեցան հաւանութեամբ ըստեղ զտէրութիւնն Արտաշիր որդույ Սասանայ…»²³:

Ազաթանգեղոսից բերված քաղվածքներից դժվար չէ նկատել, որ պարթևական կառավարող վերնախավը շարողացավ լուծել երկրի ներքին բարդ հակասությունները և հաղթահարել պետության կառավարող վերնախավի մեջ գոյություն ունեցող երկպառակությունները, նվաճված ժողովուրդների խորն ատելությունն ու ներքին հուզումները, առաջին հերթին պարսիկների, որի վերնախավը հիշում էր իր վաղեմի փառավոր անցյալը, որ Աքեմենյանների ժամանակաշրջանում եղել են իշխողներ ու բազմաթիվ ժողովուրդների տիրապետողներ: Չնայած պարթևներն ամեն մի միջոց գործադրում էին պահպանելու իրենց գերիշխանությունը՝ Թալաջնելու երկրի ներսի հակամարտ ուժերը, ուժեղացնելով ռազմական ուժը, պետության կառավարումը կենտրոնացնելով Արշակունիների ներկայացուցիչների ձեռքում, այնուամենայնիվ շարողացան ստեղծել տնտեսապես և քաղաքականապես միացյալ պետություն: Պարթև արքաները պետությունը կառավարող վարչական օրգաններում և բանակում բոլոր բարձր պաշտոնները հանձնում էին իրենց մերձավոր ազգականներին, շեղաբացնելով երկրում ապրող բոլոր ժողովուրդներին, այդ թվում նաև Թագավորության մեջ զգալի թիվ կազմող պարսիկներին: Նվաճված ժողովուրդները, բացի քաղաքական ճնշումից և արտատնտեսական հարկադրանքից, ենթարկվում էին նաև կրոնական հալածանքների: Ահա այն հիմնական գործոնները, որոնք պատճառ դարձան Պարթևական Արշակունիների կործանմանը, գործոններ, որոնք այնքան հստակ շարադրված են Ազաթանգեղոսի «Պատմություն հայոց»-ի էջերում:

Սասանյան հեղաշրջումն Իրանում շպիտը է դիտել որպես արևելյան բոնապետություններին հատուկ սուղ դինաստիական փոփոխություն: Այն կապված է ինչպես Արևելքում, այնպես էլ Միջերկրական ծովի ավազանում III դարում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական և տնտեսական տեղաշարժերի հետ: Այդ ժամանակաշրջանում, գյուղացիների և ստրուկների շահագործման հաշվին, բավականին աճել էր ապրանքային արտադրությունը, մեծացել էր պերճանքի առարկաների և գյուղատնտեսական մթերքների պահանջարկը, Իրանի վրայով էր անցնում Արևմուտքից գնպի Հնդկաստան ու Զինաստան տանող աշխույժ առևտրական ճանապարհը: Ահա այդ բոլորն իրենց ազդեցությունն ունեցան Իրանի ներքին կյանքի վրա, վճռականորեն պահանջելով կազմակերպական ու քաղաքական նոր ձևեր: Մինչդեռ Արշակունիների պետությունը քաղաքականապես և ռազմականապես իրեն սպառել էր, ի վիճակի չէր լուծելու ժամանակի հրատապ պահանջները, վճռական բեկում մտցնել Իրանի ներքին կյանքում:

Այժմ տեսնենք, թե պարթևական Արշակունիների կործանումն ինչպես ընդունեցին հայ Արշակունիները:

Արտաշիրը, պետական իշխանությունը գրավելուց հետո, անմիջապես սկսեց ամրապնդել իր դիրքերը, պարսիկների գերիշխանությունը: Նա երկրում ունշացրեց և արգելեց այլ կրոնական դավանանքներն ու ծիսակատարությունները, վերականգնեց Աքեմենյանների շրջանի զրադաշտական կրոնն ու սովորույթները: Նա զրադաշտական կրոնը դարձրեց իր պետության հենարանը և

²¹ Նույն տեղում:

²² Sб'у Т. Моммзен, История Рима, том V. М., 1949, էջ 371:

²³ Ազաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1909, 18, 1:

գործում էր հետևյալ նշանաբանով՝ «Գահը զոհասեղանի նեցուկն է, զոհասեղանը՝ գահի նեցուկը»²⁴,

Արտաշիրի կողմից պարթևական Արշակունիների տապալումը ծանր ընդունեցին հայ Արշակունիները: Եվ պատահական չէր, որ Սասանյան դինաստիայի տիրապետության հաստատման սկզբից եեթ հայ-պարսկական հարաբերությունները թշնամական դարձան: Սասանյանների մայրաքաղաքն էլ Տիրզոն դարձավ, գրում է Լեոն, և ահա նույն այն տեղը, ուր երկար ժամանակ, դարեր շարունակ հայ-պարթևական մերձեցումներ էր կոտմ-կոփվում, այժմ դառնում էր տոհմային-դինաստիական թշնամությունների քուրա: Այդ թշնամական հարաբերությունները տարածվում էին ամբողջ երկրի վրա և Սասանյանների քաղաքականության մի կարևոր կետն էր դառնում պարթևների հայաստանից բռնելու ու այս երկիրը Սասանյան շահերի հետ սերտ կապով կապելը²⁵: Ահա թե ինչու Սասանյանների հաղթանակից անմիջապես հետո «Արտաշիրի առաջին գործը եղավ կործանել նաև զՀայոցն»,— գրում է Գարագաշյանը²⁶: Սասանյանների այս քաղաքականության հետևանքը եղավ նաև այն, որ Հայաստանն սկսեց թերթվել զեպի Հռոմ: Պարսիկների դեմ մղվող ապագա գոտեմարտերում դառնալ նրա հենակետն ու դաշնակիցը:

Հայ Արշակունիները չէին կարող հաշտվել Պարթև Արշակունիների տապալման և Սասանյանների կողմից կատարված հեղաշրջման փաստի հետ: Հայ Արշակունիները Կովկասյան մի շարք ժողովուրդների հետ միասին դուրս եկան Արտաշիրի դեմ զինված պայքարի: Այդ մասին Ագաթանգեղոսը գրում է. «Արդ՝ ի միւս և ի գլուխ տարույն սկսանք խորով թագաւորն Հայոց գունդ կազմել և զօր բովանդակել, գումարել զգօրս Աղուանից և Վրաց, և բանակ զգրուս Ալանաց և զձորայ պահակն. հանել զգօրս Հոնաց, ասպատակ դնել ի կողմանս Պարսից, արշաւել ի կողմանս Ասորեստանի, մինչև ի դրունս Տիրսոնի: Աւար առեալ զերկիրն ամենայն՝ յապականութիւն դարձուցանէր զըինանիստ քաղաքացն և աւանացն ցանկալեաց զըջն երկիրն ամենայն թափուր և աւերակ թողոր. շնչել ի միջոյ ի բաց կորուսանել. խելք բակել. հիմն ի վեր ջանայր առնել, համարէր բառնալ զօրէնս տէրութեանն Պարսից: Ուխտ եղեալ միանգամայն՝ վրէժ խնդրել մեծաւ քիւնութեամբ զանկանելն իւրեանց ի տէրութենէն, ապա սպուռ ջանայր զվրէժ խնդրել, մեծաւ քիւնու նախանձարեկ լինելով. մեծամեծս փքայր՝ ի բազմութիւն զօրացն ապաստան եղեալ, և ի քաղութիւն զօրացն յուսացեալ: Վաղվաղակի ի թիկունս հասանէին մեծաւ բազմութեամբ ժիր և բաշ առն և ձիւս և բունն կազմութեամբ Աղուանք, Լիփնք և Ճիղք, Կասպը և այլ ևս որ ի սմին կողմանաց, զի զվրէժ արևանս Արտեանայ խնդրեցեն»²⁷: Մեր աղբյուրը միաժամանակ հիշատակում է, որ պարթևական պետության հետ բարեկամական օղակներով կապված բոլոր նախկին բարձրաստիճան պաշտոնյաները չէին, որ ձգտում էին վրէժ լուծել Արտաշիրից՝ տապալել Սասանյաններին և վերականգնել Արշակունիների դինաստիայի տիրապետությունը Պարթևաստանում: Այդպիսի վերարթնումը էին ցուցաբերում նույնիսկ պարթևական որոշ տոհմեր, ազգապետեր, նախարարներ ու նահապետներ: Այս մասին Ագաթանգեղոսը գրում է. «Զի թէպետ և էր ինքն ի մեծի տրտմութեան վասն բնութեան եղբայրութեան ազգատոհմին, զի հնազանդեցան և ի ծառայութիւն մտին համարաձելոյ թագաւորութեան Ստահրացուն, և ընդ նմին միամտեցան, զի թէպետ և էր խորովուր և դիսպան արարեալ, զի իւրեանց տոհմայինքն ի թիկունս եկեացեն և նոցա ընդդէմ կայցեն ընդ նորա թագաւորութեանն. անտի ամա ձեռն տուեալ ի կողմանց Քուշանաց, և յայնմ մարզէ և յիւրեանց ի բուն աշխարհէն և ի քաշ ազգաց և ի մարտիկ զօրացն զի ի թիկունս հասցեն. սակայն տոհմքն և ազգապետքն և նախարարքն և նահապետքն Պարթևաց ըլ լինէին ունկնդիր. զի միտմտեալ և հաւանեալ և նուաճեալ էին ի տէրութիւնն Արտաշիրի, որն ընդ տէրութիւն իւրեանց ազգատոհմին և եղբայրութեանն»²⁸: Ավելորդ չենք համարում այս կապակցությամբ մեջ բերել նաև Մովսէս Խորենացու վկայությունը: Նա գրում է. «Քանզի յետ սպանանելոյն զԱրտաւան և թագաւորելոյն Արտաշիրի՝ որդւոյ Սասանայ, երկու ցեղք Պահլաւն՝ որ ասպահապետդ և Սուրենեան ի Պահլաւն անուանին, նախանձ պահելով ընդ թագաւորեալ ցեղին իւրեանց. հարազատութեան սզգին, որ է Արտաշէսին, կամու յանձն առին թագաւորեալ Արտաշիրի որդւոյ Սասանայ»²⁹: Ինչպես տեսնում ենք, կատարված փաստի հետ շատ արագ հաշտվեցին նույնիսկ Արշակունի տոհմակիցներից ոմանք: Պարթևական պետության կառավարող վերնախավի

²⁴ Տե՛ս А. Крымский, История Сасанидов и завоевания Ирана арабами, М., 1905, էջ 20:

²⁵ Լեո, Երկեր, հ. 1, էջ 399:

²⁶ Ա. Գարագաշյան, Փննական պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1895, մաս 2, էջ 266:

²⁷ Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1909, 19:

²⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 20:

²⁹ Մ. Խորենացի, 2, էջ 71:

հենց այս երկպառակությունն էլ հանդիսացավ նրա կործանման հիմնական պատճառներից մեկը: Հակառակ պարթևական դինաստիայի կառավարող վերնախավի մի մասի, կասեինք հիմնական մասի, դավաճանական վարքագծի, Հայոց թագավոր Խոսրովին հաջողվում է կովկասյան ժողովուրդներին համախմբել և 229 թ, պատերազմ հայտարարել Արտաշիրին և նրան մի շարք լուրջ պարտությունների մատնել: Այս պատերազմը տևեց տասը տարի: Ահա թե ինչ է գրում Ագաթանգեղոսը այս մասին. «Սակայն անհա խոսրովու գրազմութիւն զորաց իւրոց, և որ ուստեք ուստեք եկեալ հասեալ էին ի թիկունս օգնականութեան նիզակակիցք գործոյն պատերազմի: Իսկ իբրև ետես թագաւորն Պարսից զայն ամբոխ բազմութեան գնդի, զի մեծաւ ուժով զիմեալ եկեալ հասեալ էին ի վերայ նորա ևլ և նա ընդ առաջ նոցա ի պատրաստութիւն պատերազմի: Բայց սակայն ոչ կարաց ունել զղէմ նորա, փախստեալ լինեք առաջի նոցա, զհետ մտեալ կոտորէին զամենայն զօրսն Պարսից, և դաշտացն և ճանապարհացն ցիր դիաթաւ կացուցանէին և շարխատովատ լատնէին և անհնարին հարուածս ի վերայ հասուցանէին: Եւ թագաւորն Հայոց դառնայր ի մեծ կոտորածէ ի մեծաւ յաղթութեամբ և բազում աւարաւ և ցնծայից ուրախութեամբ ի կողմանսն Հայոց յԱրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք, մեծաւ ուրախութեամբ և բարի անուամբ և բազում աւարաւ»³⁰:

Այս ծանր վիճակից դուրս գալու համար Արտաշիրն սկսում է որոնել խարդախ ուղիներ: Մանավանդ ինչպես Ագաթանգեղոսն է պատմում, Խոսրովը հաջորդ տարին ավելի մեծ զորք կուտակեց և ապատակեց Ասորեստանի կողմերը, նրան միացան նաև արաբական գնդերը և այսպէս «...ամս մետասան ստեպ-ստեպ զայս օրինակ աւար անհալ՝ աւերէին զամենայն երկիր սահմանացն որ ընդ Պարսից թագաւորութեամբ և ընդ իշխանութեամբն էր»³¹: Նա մեծ պարգևներ, փառք ու պատիվ է խոստանում նրան, ով կգտնի Խոսրովին շարքից հանելու ելքը: Եվ ահա մի ոմն Անակ, որը «...գլխաւոր նահապետն էր Պարթևաց տէրութեանն, ...յոտն կացեալ ի մէջ անցեալ՝ յիւրմէ ազգէն իբրև ի թշնամոյ վերայ խոստանայր վրէժ խնդրել»³²:

Ագաթանգեղոսը, որի հետ համերաշխ է նաև Խորենացին, պատմում է, որ Արտաշիրի կողմից կաշտոված Անակն իր ընտանիքով 239 թ. (այսինքն պատերազմի 11-րդ տարում) ձմռանը գալիս է Հայաստան՝ Խոսրովի արքունիքը ու հայտարարում, թե իբր ինքը ապստամբել է Արտաշիրի դեմ և ապաստան է խնդրում: Խոսրովը, հավատալով վերջինիս կեզծ աղերսանքներին, ջերմ ընդունելություն է ցույց տալիս և ապաստան տալիս իր արքունիքում: Սակայն Անակը՝ Արտաշիրի հավատարիմ լրտեսը, սկսում է վարպետորեն և մեծ խնամքով նախապատրաստվել իրագործելու իր տիրոջ՝ Արտաշիրի հանձնարարականը, հույս ունենալով, որ պետք է ստանա պարթևական հայրենի իշխանությունը և պահլավական սեփական տիրույթները և նրա թագավորության մեջ երկրորդը դառնալ³³:

239 թ. գարնանը, ինչպես վկայում է Ագաթանգեղոսը, երբ Խոսրովը նախապատրաստվում էր նոր արշավանք կազմակերպել՝ զեպի Պարսկաստան և գտնվում էր Վաղարշապատում, Անակը «...անոյր զթագաւորն մեկուսի նա և եղբայր իւր հարազատ՝ իբրև ի պատճառս ինչ գրոսանաց, իբրև խորհուրդ ինչ խորհել ընդ նմա, և գտուերսն պողովատիկս թերաքամեալս ունէին յանկարծ յնզակարծումն ժամանակի զհէս վերացուցեալ՝ զթագաւորն դիաթաւ կացուցեալ յերկիր կործանէին...»³⁴: Խոսրովի սպանության լուրը հասնում է Արտաշիրին, վերջինս կազմակերպում է մեծ տոնախմբություններ, զոհեր է մատուցում, ապա «Զօրածողով լինէր, խաղայր զնայր, ասպատակ սփռէր զկողմամբք Հայաստան աշխարհին. գլխօտն և զանօտն, զծեր և զաղայ. զերիտասարդ և զմանուկ առ հասարակ խաղացուցանէր ի գերութիւն»³⁵:

Արտաշիրը, գալով Հայաստան, ինչպես պատմում է Ագաթանգեղոսը, երկրից դուրս է քշում հունական, այսինքն Արևելյան Հռոմեական կայսրության զորքը և հռոմեական ու պարսկական տերիտորիաները անջատելով խորը փոսերով, տիրում է Հայաստանին և դրանով իսկ վերջնականապես շախբախում Արշակունիների դինաստիան և ամրապնդում Սասանյանների տիրապետությունը Իրանում³⁶:

Արտաշիրն իր ձեռնարկած ռազմական գործողություններն ավելի ակտիվացրեց, օգտվելով նրանից, որ Հռոմն այդ ժամանակ գտնվում էր ծանր կացության մեջ, ինչպես վկայում է Ագա-

³⁰ Ագաթանգեղոս, էջ 21:

³¹ Ագաթանգեղոս, էջ 23:

³² Ագաթանգեղոս, էջ 25:

³³ Տե՛ս Ագաթանգեղոս, էջ 26, 27, 28, 29, 30, 31:

³⁴ Տե՛ս Ագաթանգեղոս, էջ 31, 32:

³⁵ Ագաթանգեղոս, էջ 35:

³⁶ Տե՛ս Ագաթանգեղոս, էջ 36:

թանգեղոսը, «Յաւուրս ժամանակացն այնոցիկ զօրածողով լինիր իշխանն զթաց և բազում գունդս զօրաց ժողովեալ՝ զայր տալ մարտ պատերազմի ընդ իշխանին Յունաց...»³⁷։

Ազաթանգեղոսի վկայութիւնները խոստում են այն մասին, որ Իրանում պետական հեղաշրջում կատարելուց հետո Արտաշիրի իշխանութիւնը դեռևս երբեք էր Ինչպես Ռ. Ն. Ֆրայն է ընդգրծում, նա ստիպված էր շատ պատերազմներ մղել իր իշխանութիւնը կայունացնելու համար, մասնավորապես Հայաստանում, որտեղ դիմադրութիւնն առանձնապես ուժեղ էր։ Այնուամենայնիվ, Արևելքում Արտաշիրի իշխանութիւնն անկայուն էր։ Արշակունիների դաշնակիցների դեմ նա մի քանի հաղթանակներ տարավ, սակայն իսկական նվաճումները տեղի ունեցան միայն նրա հաջորդների օրոք³⁸։

Այսպիսին է Սասանյան հեղաշրջման պատմութիւնը ըստ հայ մատենագրութեան նահապետ Ազաթանգեղոսի։

Н. А. ШАХНАЗАРЯН — Сасанидский переворот в Иране по Агатангелосу. — Государственный переворот, осуществленный сасанидами в Иране в первой четверти третьего столетия нашей эры, был чрезвычайно важным событием во всемирной истории того времени. Установив свою власть в Иране, сасуны начали проводить новую, самостоятельную внутреннюю и внешнюю политику и даже играть определенную роль в международных отношениях той эпохи.

Суть истории сасанидского переворота обычно излагается на основе литературного наследия арабских историков X в., в частности Табери, так как свидетельства современников и первоисточники другого рода, к сожалени, не дошли до нас.

К истории сасанидского переворота обратился и патриарх армянской историографии, автор четвертого века Агатангелос в своей «Истории Армении». Весьма важно, в частности, предисловие греческого перевода этого сочинения, которое до сегодняшнего дня оставлено без внимания историками, занимающимися древней историей.

В настоящей статье автор стремится раскрыть богатство фактического материала, на основе которого Агатангелос представляет историю сасанидского переворота и утверждения этой династии, — даёт сведения вообще отсутствующие у арабских историков.

³⁷ Ազաթանգեղոս, էջ 30։

³⁸ Р. Н. Фрай, նշվ. աշխ., էջ 290—291։